<<ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ>>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի արագ շախմատի առաջնության եզրափակիչ մրցաշարի

Հայաստանի արագ շախմատի առաջնության եզրափակիչ մրցաշարը, որը նվիրված է Աշոտ Անաստասյանի հիշատակին, կանցկացվի Հայաստանի շախմատի ակադեմիայում (Երևան, Շևչենկո 34):

Ժամանակացույց

Հունվարի 29-ին, ժամը 12:00:

Մրցաշարն անցկացվում է շվեյցարական մրցակարգով՝ 7 խաղափուլով:

Մասնակիցներ

Մասնակցության իրավունք ունեն՝

Ա. Տղամարդկանց և կանանց գրոսմայստերները, միջազգային, ՖԻԴԵ-ի և ազգային վարպետները

Բ. 2301 և ավել ազգային վարկանիշ ունեցող շախմատիստները:

Գ. Հայաստանի արագ շախմատի կիսաեզրափակիչ մրցաշարից 15 շախմատիստ:

Մրցաշարում հաշվարկվելու է ազգային և միջազգային արագ շախմատի վարկանիշ:

Մրցակարգ

Մրցաշարն անցկացվում է շվեյցարական մրցակարգով՝ 7 խաղափուլով:

Ժամակարգ

10 րոպե մինչև խաղի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 5 վայրկյան հավելումով:

Լրացուցիչ ցուցանիշներ

Հավասար միավորներ վաստակելու դեպքում տեղերը կորոշվեն՝

1. Հատված Բուհգոլցով
2. Բուհգոլցով
3. Սև գույնով խաղացած պարտիաների քանակով

Մրցանակներ

Հիմնական մրցանակներ		Հատուկ մրցանակներ	
1-ին տեղ	300,000 ՀՀ դրամ	50+ լավագույն մասնակից	75,000 ՀՀ դրամ
2-րդ տեղ	200,000 ՀՀ դրամ	Կանանց լավագույն մասնակից	75,000 ՀՀ դրամ
3-րդ տեղ	150,000 ՀՀ դրամ	Մ16 լավագույն մասնակից	50,000 ՀՀ դրամ
4-րդ տեղ	100,000 ՀՀ դրամ		
5-րդ տեղ	50,000 ՀՀ դրամ		

**Բոլոր մրցանակները հարկվելու են ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն:*

***Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակները չեն կիսվում:*

Գրանցում

Գրանցման վերջնաժամկետը՝ հունվարի 28, ժամը 18:00 :

Հայաստանի արագ շախմատի կիսաեզրափակիչ մրցաշարում 1-ից 15-րդ տեղերը զբաղեցրած մասնակիցները նույնպես պետք է հաստատեն իրենց մասնակցությունը:

Գրանցվել կարող եք հետևյալ հղմամբ **https://forms.gle/LP2Ba5wB8TfXPS6s7**

Գրանցումն անվճար է:

Հարցերի դեպքում զանգահարել՝ **+374 99/10 440105**